

16456

891. 99

Q - 33

42

891.542-

Ռ-33

№ 6 «ՆՈՐ ՀՈՍԱՆՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 6

891.99

Ռ-33

ԽԻՆ

Կ Ի Ն

17146

Թիֆլիս

1913

891.542-3

7-38

1194

99

№ 6 «ՀԱՐ ՀՈՍԱՆՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 6


Հարգելի խմբագրախմբի

մեջ-ըստ



Կ Ի Ն

2003



17146

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ա. Մ. Կերեսկիձէի, Գաբաշուկի 1.
1913



Կ Ի Ն

Կնոջ մասին շատ քիչ բան կարող եմ գրել, որովհետև դեռ ամուսնացած չեմ: Իսկ այն ինչ որ սիրտը գրեմ, մի սովորական պատմություն է: Եւ որովհետև պատմությանս հերոսը ես եմ, ապա ուրեմն կարժէ մի փոքր կանգ առնեմ և նկարագրեմ իմ ներքինն ու արտաքինը իրենց գրական և բացասական կողմերով:

Ահա նստած եմ սեղանիս առաջ և նայում եմ հայելու մէջ: Սև խոշոր աչքեր և լայն ճակատ ունեմ, երկար մազեր եմ պահում, որոնց խնամքով սանդրում եմ գէպի յետ: Արժուաքիթ եմ, մի բան որ վեհուծիւն է տալիս դէմքիս: Գէմքս երկար է ու միշտ լըջուծիւն է արտայայտում. բեղերս բարակ են և խառնուելով միրուքիս հետ՝ գեղեցկացնում են դէմքս:

Ես շատ գեղեցիկ երիտասարդ չեմ, բայց չափազանց գրաւիչ եմ: Ունեմ ուժեղ առնականութիւն, մի բան որ շատ հաճելի է կանանց: Բարձրահասակ երիտասարդ եմ, թէև քայլելիս փոքր ինչ ծուռ եմ քայլում, բայց այդ հոգս չէ. կամացկամաց աշխատում եմ շտկել: Շարժումներիս մէջ նուրբ և բարեկիրթ ձևեր եմ մտցրել, որոնք նոյնպէս հաճելի են առհասարակ ամենքին: Մօտաւորապէս քսան և հինգ տա-



92285-42

408-2002

րեկան եմ. մօտաւորապէս եմ ստուծա՞ որովհետեւ ծնողներին տգիտութեան պատճառով ծննդեանս թւականը որոշ չէ:

Իսկ բնաւորութեանս մասին կասեմ, որ ես խոհուն և ծանրաբարոյ եմ, ծխելուց զզւում եմ, իսկ խմողներին տանել չեմ կարող, չնայած որ հայրս սոսկալի գինեմով էր: Հարուստ կենսական փորձն իմ մէջ առաջ է բերել անվստահութիւն դէպի մարդիկ, որ երբէք ցանկալի չէ ինձ համար:

Այն ժամանակ, երբ դեռ ես մօի մի գունդ էի, ծնողներս ինձ մկրտել են Լուսաւորչական եկեղեցում, ուրեմն նրանց կարծիքով ես այդ դաւանանքին պատկանողներից մէկն եմ: Շիտակ է, կար ժամանակ որ այդ այդպէս էր. սակայն երբ մօտիկից ծանօթացայ Լիւտերականութեան հետ և ուսումնասիրեցի Մահմեդականութիւնը՝ եկայ այն միակ եզրակացութեան՝ որ ոչ մէկի և ոչ էլ միւսի մէջ երջանկութիւն չկայ. հետեւողութիւնը շատ պարզ է. ես այժմ առանց դաւանանքի եմ:

Կեանքիս մէջ ոչ ոքի չեմ սիրել և ոչ ոքից էլ չեմ սիրւել. ապրել եմ միայն ինձ համար: Կարծեմ առաջին, և իայն մի անգամ սիրեցի մէկին, երբ դեռ անփորձ պատանի էի: Սիրել մարդկանց ասելով, ես հասկանում եմ չփութել նրանց և ուրիշ ոչինչ. այլապէս «սէր» բառը սխալմամբ է սարգել համամարդկային բառարանի մէջ:

Ես սիրում եմ միայն այն բաները, որոնք լրացնում են եմ հոգեկան, մտաւոր և ֆիզիքական պահանջները: Եւ որովհետեւ այդ լրացուցիչ բաներից մէկն էլ կինն է, ես կնոջն էլ եմ սիրում, բայց

միայն այն դէպքում, երբ կինը ինքն է հետապնդում և անձնատուր լինում ինձ: Այդ պարագան կարելի է բացառել նրանով, որ ես հպարտ եմ և չեմ կարող ստրկանալ կնոջ առաջ՝ լոկ կրքերիս յագուրդ տալու համար:

Ոչ մի շրջան չեմ ստեղծել ինձ համար և հասարակութեան մէջ ման գալ չեմ սիրում:

Իմ ամենասիրելի աշխատանքը գրելն է, որի համար ես իմ վատնած ժամանակը չեմ ավստում: Այդ սիրելի է նախ այն պատճառով, որ միայն դրա մէջն եմ գտնում իմ մխիթարութիւնն ու երջանկութիւնը, և ապա՝ այդ է այն միակ միջոցը, որով ես վարդապետ եմ իմ ապրուստը հայթայթել:

Այս բոլոր առաւելութիւնների և պակասութիւնների վրայ եթէ աւելացնեմ վեհաձնութիւնը, հաստատակամութիւնը և անսահման համբերութիւնը՝ իմ ամբողջ էութիւնը կատարեալ վր լինի:

Պէտք է խոստովանեմ, որ ես բաւական մեծ կարծիք ունեմ իմ մասին և այդ զգացմունքը մխիթարում է ինձ և շոյում է ինքնասիրութիւնս:

Այն էլ չպէտք է մոռանամ յիշել, որ ես ընդունակ և շնորհալի երիտասարդ եմ, թէև մեծ կարիքի ճնշման տակ չեմ կարող իմ ներքին ամբողջ աշխարհը ցուցադրել, սակայն կարծում եմ, որ այդ էլ երկար չի տևի, իմ տոկնութեան և յարատեւութեան շնորհիւ, ամեն ինչ կամաց-կամաց կը հարթեմ: Ահա այս բոլոր լաւ և վատ յատկութիւնները միախառնելով իրար՝ իմ մէջ՝ առաջ են բերել մի դիւրեկան տարօրինակութիւն, որը՝ յատուկ չէ իւրաքանչիւր մահկանացուն:

Ինչպէս ասացի, քառորդ դար ապրել եմ և ցա-
ւօք սրտի խոստովանում եմ, որ կեանքիս մեծագոյն
մասը մենակութեամբ եմ անցկացրել: Սակայն սրանից
մի քանի տարի առաջ, պարագաների բերմամբ, ինձ
վիճակեց ապրել մի փոքրաթիւ ընտանիքում որպէս
գիշերօթիկ: Թէև սկզբում այդ բանն ինձ շատ անհա-
ճոյ և տարօրինակ էր թւում, բայց հետզհետէ հաշտ-
ւեցի այդ դրութեան հետ, և մի քանի ժամանակից
յետոյ, օրերս նոյնիսկ ուրախ և անող էին անցնում:

Ընտանիքը, որի մէջ ապրում էի, բաղկացած էր
չորս անդամներից: Մարդու պառաւ մայրը, երկու
ամուսիններ և իրենց երկու տարեկան անդրանիկ
դաւակը:

Մարդը միջանասակ, հաստափոր, կլոր դիմա-
գծով, խորամանկ աչքերով, կասկածոտ արտայայտ-
ութեամբ մօտ երեսուն տարեկան երիտասարդ էր:
Ունէր անօթեղէնի խանութ և երկու փորձած զոր-
ծակատար:

Խանութը լաւ աշխատում էր, բայց հազիւ ապ-
րում էին, որովհետև մարդը սոսկալի թղթամոլ էր:

Մենք բնակւում էինք երկրորդ յարկում: Տինգ
լաւ կահաւորւած սենեակներից ամենափոքրը յատկա-
ցրել էին ինձ: Իմ սենեակը սրահի նրբանցքով անջա-
տւած էր միւսներից: Պատուհանը նայում էր մի շատ
փոքրիկ պարտէզի վրայ, որի մէջ միայն մի հաստա-
րմատ ուռենի վար, հարուստ ճիւղերով: Առաւօտեան
անուշ պահերին, սարեակները երգում էին իրանց
քաղցր երգը և կարծես թէ նրանց ճլւղիցները օրօր
էին ասում ինձ աւելի խորը քնելու:

Առաջին օրը ես լաւ չգիտեցի կնոջ դէմքը, չգի-

տեմ այդ համեստութիւնից էր, թէ ամաչկոտութիւ-
նից: Երբ նա քաղաքավարութեամբ սենեակիս դուռը
բաց արեց և ինձ հրաւիրեց ճաշի, ես մեղմ ժպիտով
նայեցի նրա երեսին, նա կարմրեց և որպէսզի ցոյց
չտայ իր այլափոխութիւնը, կռացաւ գետին և շտկեց
գորգի ծայրը ու հեռացաւ ծանր քայլերով:

Այդ ժամանակ ես մաքառում էի իմ ներքին
զգացմունքների դէմ ու ինքս ինձ մեղադրում էի այն
բանում, որ բոլորովին անփորձ եմ ընտանեկան
կեանքին. չնայած որ զրում եմ, բայց գրեթէ բուն
կեանքը ինձ անծանօթ է:

Երևի որ և է բան նկատի ունենալով կարմրեց,
մտածում էի ինքս ինձ. կամ թէ հէնց իմ տարօրինա-
կութեան համար իմ տեղս ինքը ամաչեց, և վերջապէս
սով գիտէ ինչն եղաւ նրա կարմրելու դրդապատճա-
ռը: Այդ բանից ազդւած՝ ես սկսեցի փոքր ինչ ինձ
հաւաքել, շարժումներիս մէջ անհարազատ ձեւեր
մտցրի, խօսակցութեանս տոնը փոխեցի, մէկ խօսքով
ինքս ինձ այնպիսի դրութեան մէջ դրի, որպիսի կեղծ
դրութեան մէջ երբէք չէի եղել:

Ճաշելիս մարդը միշտ կլուբից էր խօսում, այ-
սինչ մարդը այսքան տարաւ, այն ինչը այնքան տա-
նուլ աւեց, ինձ եթէ մի թուղթ էլ գար, շարունա-
կում էր նա, ես հինգ հարիւր տարած կը լինէի, բայց
հակառակի պէս հէնց Մալի Կողբը չեկաւ, վերջաց-
րեց իր խօսքը և սրբելով բեղերը սեղանից հեռացաւ
ու սկսեց ծխել:

— Պարոնին երկրորդը լեցրու. նկատեց պառա-
ւը իր հարսին, տեսնելով իմ պնակի դատարկւելը:

Մինչ այդ, մոռացել էի որտեղ լինելս, սակայն

պառաւի սուր նկատողութիւնը յիշեցրեց ինձ, որ պատեանիցս դուրս չգամ: Ես ինձ աւելի նեղած էի զգում, որովհետեւ կարծում էի թէ բոլորն էլ իմ դժգոհներն են համարում, նայում են՝ թէ ինչպէս եմ ճաշում, քաղբավարի՞ եմ թէ ոչ, շատ եմ ուտում թէ քիչ: Այս բանը մանաւանդ այն ժամանակ էր ճնշող, երբ մեզանից ոչ ոք չէր խօսում: Հէնց որ պառաւի դողդոջուն՝ կամ մարդու խռպոտ ձայնը խզում էր լուսթիւնը, այն ժամանակ ես երկար շունչ էի քաշում և ինձ ազատ էի զգում: Այդ բոլոր ժամանակ տիկին Աշխէնը զբաղւած էր երեխան կերակրելով:

Երբ ճաշս վերջացրի, ես էլ սեղանից քաշեցի և նստեցի Զօրեանի կողքին: Նա իմ կետիքով հետաքրքրեց, ես պատմեցի նրան իմ կենսաբան մի քանի նշանաւոր դէպքեր, որոնք շատ լաւ ազդեցութիւն արին Զօրեանի վրայ: Տես նելով իմ անկեղծութիւնը դէպքերը նկարագրելու մէջ, նա ինքն էլ սկսեց իր կենսաբան պատմել: Ես լուռ լսում էի և երբեմն-երբեմն զարմացած բացականչութիւններ էի անում, ու նա տեսնելով այդ՝ աւելի և աւելի տաքանում էր:

Ահա այդ միջոցին ես ժամանակ ունեցայ լաւ դիտելու տիկին Աշխէնին: Նա սեւ, խոշոր աչքեր ունէր, խիտ յոնքեր, որոնք խառնւելով իրար փակել էին քթի և ճակատի միացումը: Դէմքը ճերմակ էր և երկու այտերի վրայ ձմերուկի միջուկի պէս կլոր կարմրութիւն կար: Դա կարելի է համեմատել վերջալոյսի բոսորագոյն ճառագայթների հետ, մանաւանդ ձմեռային պարզ օրւայ մայր մտնող արևի հետ, երբ սպիտակագոգաթ սարերի գլխին արևի կարմիր անզօր ճառա-

գայթներն են փայլում: Ահա ճիշտ այդպէս էր տիկին Աշխէնի դէմքը: Նրա շարժումների մէջ նրբութիւն կար, քայլածքը թէև դանդաղ էր, բայց հաճելի: Նա չափազանց համէստ էր երևում, բարի և մեղմ արտայայտութեամբ, ձայնը բարակ էր, և խօսելիս յօնքերը բարձրացնում էր, որ աւելի հաճելի տպաւորութիւն էր թողնում: Մաքուս շատ բան անցաւ. իսկ նրա համեստութիւնը որպէս արգելափակ պատճառ իմ մէջ առաջ բերեց ափսոսանքի զգացում:

Թէև Զօրեանը դեռ շարունակում էր իր կուրսային պատմութիւնը ու ես էլ երեւոյթապէս ցոյց էի տալիս իմ հետաքրքրութիւնը, սակայն խելքս ու միտքս տիկին Աշխէն Զօրեանի վրայ էր:

Երբ վերջացրինք մեր խօսակցութիւնը, արդէն կարծես բաւական մտերմացանք: Խօսելիս միայն մի բան նկատեցի, որ Զօրեանը չափազանց տգէտ էր դատողութիւնների և անփոյթ բառերի գործածութեան և դարձածքների մէջ: Թղթախաղը մեռցրել էր նրա մէջ ամեն ինչ: Հնայած որ միջնակարգ կրթութիւն ունէր, բայց թւաբանական մի պարզ խրնդիր չէր կարող լուծել: Այնքան ծիծաղեցի ճաշի վերայ, երբ լացարարի փոքրիկ հաշվեցուցակը ներկայացրին նրան, որպէսզի փողը վճարէ. նա մինչև ճաշի վերջնալը չկարողացաւ հաշուել. կինն ու մայրը ծիծաղից նոյնպէս մարում էին: Բայց այն էլ նկատեցի, որ կնոջ հպարտութիւնը թոյլ չէր տալիս անհաշատ կարծիք կազմել նրա ամուսնու մասին: Եւ սկսում էր արդարացնել մարդուն, թէ՛ անքնութիւնից է, շատ խաղալուց իր ուշադրութիւնը փչացրել է, կամ առարկում էր, թէ երբեմն մարդս ընկնում

է այնպիսի հոգեբանական բարդ դրութիւններ մէջ, որ ամենահասարակ բանն անգամ դժւարին է դառնում նրան լուծել: Սակայն այդ բոլոր առարկութիւնները ապարդիւն էին, որովհետեւ ինչնէս յետոյ պարզւեց, նրա մարդը իսկապէս որ հաստագլուխի մէկն էր: Նրա կիներ նոյնպէս միջնակարգ կրթութիւն ունէր և շատ յաջող էր մաթեմատիկայի մէջ:

Զօրեանը գրեթէ ամբողջ օրը խանութումն էր անցկացնում, իսկ գիշերւայ կէսը կ'ուրբում:

Կիներ ամբողջ օրը տանն էր նստած և ման գալ չէր սիրում. երբեմն-երբեմն յաճախում էր թատրոն, բայց շատ էր սիրում օպերա:

Կարճ ժամանակից յետոյ ես անշտապ նրանց և պէտք է ասել, որ բոլորի համակրութիւնը շահեցի, մանաւանդ Զօրեանի. նա ուղղակի պաշտում էր ինձ և չափազանց վստահ էր իմ մարքութեան և ազնւութեան վրայ: Եւ ճիշտ որ Զօրեանը չէր սխալւում. ես այդ ժամանակ պարզամիտ, մաքուր և ազնիւ երիտասարդ էի: Շատ անգամ էր պատահել, որ նա մի տեղ գնալիս, ինձ ասում էր. «այս օրը տան կաց, գուցէ ես գիշերը չը կարողանամ գալ»: Ես նոյնպէս իմ ժամանակի մեծագոյն մասը տանն է անցկացնում: Տիկին Աշխէն Զօրեանը սկզբում չէր համարձակւում գալ իմ սենեակը. նրան միշտ տեսնում էի նստած ներքին սենեակում կարելիս կամ կարգալիս: Իսկ պառաւ սկեսուրը նրա անբաժան ընկերն էր, միշտ և ամեն տեղ հարցի հետ էր: Այդ բանը կարելի է ասել տիկին Աշխէնին և հաճելի էր և անհաճոյ:

Արդէն լրանում էր տարին, որ ես տեղափոխւել էի նրանց մօտ: Ամեն բան իր կարգովն էր գը-

նում: Սակայն մի դէպք, մի անողոր դէպք եկաւ ալեկոծելու Զօրեանի ամբողջ ընտանիքը:

Ծննդեան առաջին գիշերը նստած մինչև ժամ չորսը ուրախութիւն էինք անում: Կային դրսեցի մի քանի երկսեռ հիւրեր: Զօրեանը, ինչպէս այդ երեկոյ ապացուցեց, որ կաս խմողը չէր: Նա նստել էր հրաւիրւած երկու կանանց մէջտեղը, խմում էր և կատակներ անում: Իսկ ես, նստել էի տիկին Աշխէնի և պառաւի մէջտեղը: Տիկին Աշխէնը սեղանից հրամաններ էր արձակում աղախնին, կարգաւորում էր սեղանը և ամեն բան շատ կանոնաւոր էր դնում: Նա ևս մէջ ընկնէր խմում էր. դրանց մէջ միայն ես էի, որ երբեք չխմեցի:

Տիկին Աշխէնը մի պատճառով սեղանից վեր կացաւ, գնաց միւս սենեակը, մի քանի րոպէից յետոյ եկաւ ու նստելիս աթոռը զգուշութեամբ մօտեցրեց ինձ. և որպէսզի ցոյց տայ, թէ այդ անում է անգիտակցաբար և առանց որևէ պատճառի՝ անտարբերութեամբ երկու ձեռքերը տարաւ դէպի ծոծրակը և յարգարեց մազերը: Յետոյ դառնալով ինձ քնքշութեամբ ասաց.

— Դուք ինչո՞ւ չէք խմում. շիտակ է՝ խմելը վատ սովորութիւն է, բայց ես կարծում եմ՝ ընկերական շրջանում չափաւոր խմելը վնաս չունի: Նա այս ասելիս լցրեց իր փոքրիկ կոնեակի բաժակը, հրամցրեց ինձ: Ես չմերժեցի, աչքերս փակելով կոնձեցի մինչև վերջին կաթիլը: Այդ բոլորը ես արի համարեա թէ մեքենայաբար, որովհետեւ կասկածոտ լինելով, կարծում էի թէ ամենքը իրանց բանն ու գործը թողած՝ ինձ են մտիկ տալիս: Մի ուրիշ և կարե-

ւոր պատճառն էլ այն էր, որ ես չէի կամենում այդ առաջարկութիւնը տիկին Զօրեանից լինէր: Առհասարակ ես մեծ զգուշութեամբ նայում էի, որ որեւէ վատ կարծիք չկազմեն իմ մասին:

Զօրեանի աչքերը կարմրել էին, քոյրը ծանրացել էր կոպերի վրայ. թէև խօսում էր, բայց ոչինչ չէր հասկացում նրա խօսակցութիւնից: Միւս աղամարդիկ Զօրեանի օրին էին հասել, կրնայք զբաղւած էին իրանց շատախօսութեամբ, տիկին Աշխէնը թէև նրանց էր նայում, բայց նրա ուշքն ու միտքը ուրիշ տեղ էր, նա մի ինչ որ բանի մասին էր մտածում և վայրկեան առ վայրկեան անհանգիստ շարժումներ էր գործում:

Այդ գիշերը նա աւելի գեղեցիկ էր երևում. թէև մի տխուր գիծ էր նկատւում նրա արտայայտութեան մէջ, բայց ընդհանրապէս արամադրութիւնը լաւ էր:

Երբ բաժակների շրջանառութիւնը սկսեց՝ տիկին Աշխէնը էլի լցրեց կոնեակը և դրեց առջև. բաժակները չխկացին իրար և էլի խմեցինք կենացներ: Երբորդ բաժակը մերժեցի խմել, սրովհետև սիրտս ըսկսեց խառնել:

Տիկին Աշխէնը պատմեց իմ բնաւորութեան, նիստ ու կացի և սովորութիւնների մասին և շատ յաջող կերպով ընդգծեց իմ բնաւորութեան գրական և բացասական կողմերը. միւս կանայք զարմանք արտայայտելով առաջարկեցին իմ չնաշխարհիկ կենացը: Երբ ես հրաժարեցի և խնդրեցի, որ ինձ մասնակցած համարեն, տիկին Աշխէնը ոտքով սեղմեց իմ

ոտքը և «այս մէկն էլ խմիր» ասելով՝ բաժակը տրեւեց ձեռքս:

Այդ րոպէին երբ նա ոտքը դրեց իմ ոտքին և նրա ծունկը դիպաւ իմ ծնկանը, ես մի ելեքտրական սարսուռ զգացի, բայց այդ շուտով փոխեց փոքրիկ հաճոյքի: Ուրախութեան և մեղմ տխրութեան տակ, անգիտակցաբար վերցրի բաժակը և ընդմիջում երով խմեցի:

Միտքս բոլորովին պղտորեց, երևակայութիւնս կենդրոնացաւ տիկին Աշխէնի վրայ: Այսպիսի դէպքերում արամաբանութիւնը ուժեղանում է. մարդս սկսում է կշռագատել ամենաչնչին երևոյթն անդամ և նրանից եզրակացութիւն հանել և այն էլ աւալալման նպաստաւոր եզրակացութիւն: Այդպիսի զրուիեան մէջ էի ես: Այս բանը դիտմամբ չէր կարող տրամ լինել, մտածում էի ինքս ինձ. ո՛չ, ո՛չ, առում էր մի ուրիշ ձայն, հէնց ուղղակի միտումաւոր էր. կանայք որքան էլ մաքուր լինեն, բայց այդպիսի առիթից օգտւել գիտեն: Իմ մտքով այն էլ անցաւ, որ նա սիրելիս է եղել ինձ. եթէ մինչև այժմ այդ զգացմութիւնը չէ արտայատել, այդ կարելի է վերագրել կանացիութեան կամ աննպաստ պայմաններին: Յետոյ ես յիշեցի մեր առաջին հանդիպումը, երբ նա կարմրեց, բայց չուզեց որ յայտնւի. էլի շատ-շատ դէպքեր յիշեցի, յիշեցի նրա շարժումներից որոշ ձևեր, որոնք միայն ինձ հետ խօսելիս էր անում: Սակայն աւելի ողբալի էր վերջին պատկերը, որ մենք արդէն սիրում ենք իրար, ապրում ենք իրար հետ, բայց այդ բանը երկար չէ տևում: Զօրեանն իմանում է թէ բանն ինչու՞մ է, սակայն որոշ ոչինչ չգիտէ, դրա

համար սկսում է հետապնդել մեզ. կնոջ վրայ այն աչքով չէ նայում, ինչպէս առաջ, խանդոտութիւնը վառում է նրա ներսի աշխարհը, բայց դրական ոչ մի քայլ չէ կարող անել. և իրաւունք էլ չունի անելու, որովհետեւ ամեն ինչ հանելուկային վիճակի մէջ է: Սակայն ինչպէս փորձերը ցոյց են տւել, յանցանքները առհասարակ երկար չեն թաքնւում, այնպէս որ մի օր էլ անա սրահում համբուրւելիս մարդը տեսնում է մեզ, խանդից սպանում կնոջը, յետոյ յարձակւում է ինձ վրայ. մենք խառնւում ենք իրար, բայց նրա առաջին հարւածը մահացու լինելով, ես կամաց-կամաց թուլանում և ընկնում եմ յատակի վրայ, արեան ճապաղիների մէջ: Գալիս է ոստիկանութիւնը, վերցնում են մեր դիակները, քննութիւնից յետոյ մեզ տանում են թաղելու: Միւս օր թերթերը գրում են հա գրում, վիճաբանութիւններ են սկսւում, մէկը արդարացնում է ինձ, միւսը դատաւարտում իմ արարքը և վերջապէս խնդիրը վերջանում է նրանով, որ հասարակական կարծիքը արդարացնում է Զօրեանին և արժանի է գտնում մեր մահը:

Այս արագ մտածութեան տակ, ես ձեռքս դրի ճակատիս և ներդողութիւն խնդրելով հեռացայ: Մտնելով սենեակս, անմիջապէս պառկեցի քնելու. սակայն մտքերս ինձ հանգիստ չէին տալիս:

Հէնց որ Զօրեանին յիշեցի, առաջին անգամ մի ատելութիւն, մի զգանք զգացի դէպի նա:

Ես կարծում էի որ Զօրեանը ինձ զրկողութիւն է արել և անպատիժ է մնացել, այնպէս անտանելի

էր նրա դէմքը, երբ մտաբերում էի նրա ուռած կարմիր աչքերը, հաստ փորն ու լիք վիզը:

Չայները կամաց-կամաց մարում էին, ուշ էր արդէն և բոլորը ցրւեցին: Այդ խորհրդաւոր լուսթեան մէջ, կամաց դուռն բացւեց և երևաց տիկին Աշխէնը: Նա մատի ծայրերի վրայ մօտեցաւ իմ սեղանին, զգուշութեամբ վառեց ճրագը և մի խոր շունչ քաշելով կանգնեց:

Ես չէի քնել, բայց քնած ձևացայ: Նա կուցաւ ինձ վրայ, ձեռքը դրեց ճակատիս, երևի տաքութիւնս իմանալու համար և յետոյ բարձրանալով մըմնջաց. — «Օ... ինչքան տաքութիւն ունի»: Ես շուռ եկայ և նոր քնից զարթնածի պէս, աչքերս տրորելով նստեցի անկողնիս մէջ:

— Ի՞նչ է պատահել տիկին, — հարցրի ես բոլորովին անտարբեր:

— Ոչինչ, կարծելով որ այդ մի քանի բաժակ կոնեակը վատ ազդած կը լինի ձեզ վրայ, եկայ իմանալու, — ասաց նա անտարբեր ձևանալով. սակայն նրա զիլ ձայնի դողդոջ ելեէջները դաւաճանում էին նրան:

Որպէս զի նրան ազատեմ նեղ դրութիւնից, մի քանի հարցեր տւի հիւրերի մասին և նա ուրախութեամբ պատասխանեց: Խնճոյքի մասին եղած խօսակցութեան կապը չկորցնելու համար նա շարունակեց պատմել, որ իմ գնալուց յետոյ տղամարդիկ բոլորն էլ անզգայանալու չափ հարբեցին:

— Նրանք ինչպէս անցկացրին, հարցրի ես, այս անգամ բաւական հետաքրքրութեամբ:

— Այսինքն ո՞վքեր:

— Մօսքս կանանց մասին է, պատասխանեցի ժպտալով:

— Բոլոր ժամանակ ձեր մասին էինք խօսում, նրանց շատ դիւր եկաւ ձեր մեղմ և խոհուն բնաւորութիւնը:

— Այժմ ժամը քանիսը կը լինի, ասացի ինքս ինձ և շտկելով նայեցի սեղանիս ժամացոյցին:

— Ա՛խ հինգն է արդէն, ասաց նա և պատրաստեց գնալու, երբ կարծես մի ինչ որ արգելքի հանդիպելով ասաց.

— Ուրեմն ձեզ լաւ էք զգում հա... Ես եկայ իմանալու միտիս և ուրախ եմ, որ լաւ էք: Տիկին Աշխէնը «գիշեր բարի» ասելով հեռացաւ:

Ինձ այնպէս թւաց, որ սենեակը ամբողջապէս դադարեց և ինչ որ լաւ էր՝ տիկինը տարաւ իր հետ: Ամբողջ գիշերը չքնեցի. մտածում էի այն մասին, թէ սա Զօրեան ամուսինների կողմից մի դաւադրութիւն է, որ լարում են իմ գէմ, իմ բարոյակաւորութեան կշռաշափը իմանալու: Այլապէս ի՞նչ է նըշանակում այս, ամբողջ մի տարի է, ոչ մի մտերմական յարաբերութիւն. ոչ մի առանձին խօսակցութիւն տեղի չէ ունեցել իմ և տիկին Զօրեանի միջև:

Այո, այո, սա մի խաղ է, կրկնում էի ինքս ինձ. բայց լաւ թող գիտենան, որ նրանք տանուլ են տալիս: Այդ սրիկաները ճշմ հետ գործ ունեն, գիտեն արդեօք: Եթէ այս ուղիղ է, ապա կարժէ նրանց տեղն ու տեղը խայտառակ անել: Այս և նման մը մտածմունքներով ալեկոծւում էր միտքս ու ինձ հանգիստ չէր տալիս:

Ի՞նչ դաւադրութիւն կարող է լինել, ասում էր

իմ ներքին ձայնը. կինը սպասումէ, որ առաջին հետապնդողը և առաջարկութիւն անողը տղամարդը լինի, իսկ դու փակած քո սենեակում, մենակութեամբ ես անցկացրել, և չես էլ մտածել մի ներքին կապ հաստատել քո և տիկին Զօրեանի մէջ: Եւ ահա առիթն եկել է ու նա կամեցել է մի փորձ անել:

Գիշերը չքնելու պատճառով, առաւօտեան խոր քնի մէջ էի, երբ զանգակի ձայնը զարթեցրեց ինձ: Ես դանդաղութեամբ հագնեցի, լւացեցի և յանցաւորի պէս կամաց մտայ ճաշարան և մօտեցայ սեղանին: Ինքնատեղը հաղիւ խշշում էր, սեղանատանը միայն պառան էր և իր փոքրիկ թոռը:

Երբ հարցրի Զօրեանի մասին, ասաց որ նա արդէն նախաճաշել և գնացել է խանութը: Աղախինը իմ բաժակն ածեց և զրեց առաջս. ես սկսեցի խմել և մտածել: Սիրտս արագ-արագ բարախում էր, սպասողական դրութեան մէջ էի: Ամեն մի ոտնաձայն ինձ կործնել էր տալիս, որ նա է, ահա գալիս է, և բարի լոյս տեսնով հասնում է սկեսուրի կողքին և զբաղւում է երեխայով, իսկ ինձ հետ խօսելիս սկսում է իր անվերջ «դուք»-երի շարքը:

Մի փոքր անց, տիկին Աշխէնը եկաւ և բարեկէլով նստեց երեխայի մօտ, ուղիղ իմ դիմաց: Նա մի քանի անգամ համբուրեց երեխային և լեցնելով բաժակը, սկսեց թէյ խմել:

Ես ինչպէս առաջ, այնպէս էլ այդ ժամանակ չէի նայում տիկին Աշխէնին. այդ բանին նպաստում էր այն հանգամանքը, որ պառաւր սատանայի պէս միշտ ցցած էր լինում մեզ մօտ: Ես նկատում էի թէ ինչպէս տիկին Աշխէնը միշտ որևէ պատրասկով պառաւին ուղարկում էր դուրս:

408-2002

1001
(3606)



— Ի՞նչպէս քնեցիր զաւակս, — ասաց նա իր տղային ամուր սեղմելով կրծքին:

— Անուշաւանը խելօք տղայ է, — պատասխանեցի ես. — նա լաւ քնած կը լինի հա՛. . . Բայց երբեմն-երբեմն որ լաց է լինում, այդ լաւ չէ, վերջացրի խօսքս և նայեցի մօր երեսին:

— Իսկ դ՞ուք ինչպէս քնեցիք, հարցրու հօրեղ-բօրը, — ասաց տիկին Աշխէնը, ուղիղ նայելով տղայի բիբերի մէջ:

— Օ՛... Իմ մասին ոչինչ մի հարցնէք, — ասացի ես. — ամբողջ գիշերը չեմ քնել, իսկ հիմա գլուխս սաստիկ ցաւում է:

— Ես հէնց այդպէս էլ կարծում էի, որովհետեւ այդ մի քանի բաժակ կոնեակը ձեզ վրայ վատ ազդեց, դրա համար երէկ ես... — Նա չվերջացրեց իր խօսքը և ինձ թողեց կապածանքի մէջ: Այդ կանանց բնորոշ գծերից մէկն է, որով կարողանում են հետաքրքրութիւն առաջ բերել խօսակցի մէջ: Հէնց այդպիսի դրութիւն ստեղծւեց և ինձ համար: Ի՞նչ էր ուզում դրանով տեսլ, հարցնում էի ինքս ինձ և ոչ մի եզրակացութեան գալ չէի կարողանում: Դեռ շատ բաներ պիտի խօսէինք, բայց պառնաւ ներս մտաւ: Մի բան, որ ես որոշ կերպով նկատում էի, այդ այն էր, որ թէ ես և թէ նա շատ բիշ էինք խօսում երրորդ անձնաւորութեան առաջ: Այս առհասարակ մտերմութեան նշան է, որ տեղի է ունենում սիրահարների մէջ:

Իմ ենթադրութիւնը հաստատեց այն պարագան, որ երբ սկեսուրը ներս մտաւ, նա սկսեց ինձ հետ այնպիսի խօսակցութիւն, որպիսին սովոր էր անել

ճաշի ժամանակ: Վեր կացաւ տեղից, երկու ձեռքով քոնեց ինքնաեռը և դառնալով ինձ՝ ասաց.

— Հեշտաեռը տրդէն սառչելու վրայ է, աւէք բաժակը «ձեզ» համար մէկն էլ լցնեմ: Ես գլխի բացասական շարժումով յայտնեցի, որ չեմ ուզում և շնորհակալութիւն անելով հեռացայ:

Անցաւ բաւական երկար ժամանակ. մեր յարաբերութիւնները գրեթէ նոյնն էին, ինչպէս առաջ: Կեանքս ընթանում էր իր սովորական տարտամութեամբ, միայն մի բան էր փոխւել. ես քիչ ծուլացել էի: Շատ անգամ գաղիս նստում էի սեղանիս առաջ մի բան գրելու, սակայն մտքերս չէի կարողանում հաւաքել. յետադիմութիւն էր կատարւում իմ մէջ ու ես այդ զգում էի: Ինձ թւում էր, մի ինչոր բան պակասում է, և որ այդ պակասը չի զգացւի այն ժամանակ, երբ ես նորից դառնամ իմ նախկին միասնութեան և շարունակեմ իմ զբաղմունքը առաջւայ նման:

Սակայն իզուր, ես օրէցօր դիմում էի դէպի անկում: Առաջ տիկին Զօրեանը մի սովորական կին էր իմ աչքում ու ես ուշադրութեան անգամ չէի առնում նրան, բայց հետզհետէ նա բարձրանում և անմատչելի էր թւում ինձ:

Ինձ դիւրեկան էր նայել նրա ձերմակ վզին, ծոծրակին, սրտեղից մազերը սանդղում էր դէպի վերև և մի քաղցրութիւն էի զգում, երբ նրան տեսնում էի առաւօտեան անկանոն հագուստների մէջ:

Սաստիկ գրգիռ է ի զգում, տեսնելով նրա հոլանի պարանոցը, մերկ թևերը և մարմինը, որ նեղ հագուստի պրկումից ողորկ էր երևում: Չափազանց

հպարտ և յամառ երիտասարդ լինելով՝ ես ինձ ստորացած էի համարում, կրքերի ազդեցութեան տակ՝ խոնարհել կնոջ առաջ. ուստի նորից սկսեցի վերականգնել իմ նախկին կենցաղավարութիւնը: Թէև սկզբում բաւականին դժւարին երևաց, սակայն կուսաց-կամաց կարողացայ կրկին իմ ուղին հարթել:

Ինչո՞ւ նա չալիտի մօտենայ ինձ, երբ իսկապէս սիրում է: Կամ թէ ինչո՞ւ միշտ առաջին ենթարկւողը տղամարդը պէտք է լինի: Եթէ տղամարդու և կնոջ մերձեցման միակ պատճառը կրքերի յագեցումն է, ապա ուրեմն թող առաջինը կիսն անձնատուր լինի: Ահա, այսպէս էի տրամաբանում ինքս ինձ և հանդատացնում էի իմ հպարտութիւնը և ինքնասիրութիւնը: «Ինչքան անտարբեր լինե՞ք գէպի կանայք, այնքան նրանք շուտ են ընկնում ծուղակը» աւսում էր իմ ուսանող ընկերներից մէկը:

Ես էլ հէնց այդպէս որոշեցի վարուել և իսկապէս որ արդիւնքը շուտով երևաց:

Կար ժամանակ, ես հետապնդում էի նրան, սակայն նա խոյս էր տալիս՝ հէնց որ ես սկսեցի թուլանալ, նա սկսեց հետևել ինձ: Բաւական է կանանց այս թոյլ կողմը ամուր բըռնեցիր և նրանց խորամանկութիւնները կանգ են առնում:

Այդպէս վարեցի՞ ես երկւոր ժամանակ:

Օ... այս ուերիչ ժամանակներում ինչքան որորմելի և զզւելի էր թւում ինձ Զօրեանը: Ապա նրա պառտւ մայրը, տեսնել անգամ չէի կամենում նրա քաւթառ դէմքը, որ միշտ ցցւած էր լինում հրեակայութեան մէջ: Ես ուզում էի որ դրանք յանկարծամահ լինեն, կամ մի գժբազդ պարագային մեռնեն,

որովհետև դրանք մէկ-մէկ պատնէշներ էին իմ և նրա մէջ: Բայց իմ ներքին ձայնն ասում էր, որ ես մանակից չլինեմ նրանց մահւան:

Այս բոլորից յետոյ, ես ինքս ինձ գնում էի Զօրեանի տեղը. ահա ես ամուսնացած եմ, մտածում էի ես, կինս հաւատարիմ է և սիրում է ինձ, մի երիտասարդ հետապնդում է կնոջս, կինս ինձ դաւաճանում է: Ի՞նչ պէտք է անեմ ես այդ պարագային, հարցնում էի ինքս ինձ:

— Ապահարզան. — ոչ:

— Ներե՛լ. — ամենեկին ոչ:

— Ապա ի՞նչ անել. — սպանել, այո, սպանել և մէկին և միւսին, առանց մի վայրկեան տատանւելու: Ահա այսպէս էր պատասխանում իմ ներքին ձայնը իմ իւրաքանչիւր հարցին: Ուրեմն եթէ այս այսպէս է, Զօրեանը իրաւունք ունի վերջակէտ դնելու իմ և իր կնոջ կեանքին:

Հէնց որ այս կերպ հաշիւ էի տալիս ինքս ինձ, Զօրեանը շատ բարի, ներողամիտ և անհիւ էր երևում, և նոյնիսկ որոշում էի գնալ նրա մօտ և ներողութիւն խնդրել նրանից գործած յանցանքիս համար, ուխտել նրա առաջ և խօսք տալ, որ այլևս այդպիսի անվայել մտածմունքներ երեւակայութեանս մէջ տեղ չեն դառնի:

Բայց իմ գգացումների մաքառման օրերը շուտ անցան. թէև երբեմն-երբեմն սիրտս մխում էր, բայց այդ նոյնպէս անկարող էր մի յեղաշրջում առաջ բերել իմ կեանքում: Ես էլի սկսեցի իմ նորմալ աշխատանքները և կեանքս ընթանում էր իր սովորական ընթացքով:

Սակայն այդպէս չէր տիկին Աշխէնը. նրա մէջ նրա կամքին հակառակ սոսկալի փոփոխութիւն էր առաջ եկել: Ես այդ նկատում էի նրանից, որ նա անկախ էր դարձել, պառաւը նրա համար գոյութիւն չունէր. շիտակ է, աշխատում էր ամեն բան թաքցնել որքան կարելի է, բայց երբ այդ անհնարին էր՝ նրա հոգսը չէր: Մի ուրիշ հանգամանք էս. նա ըսկսել էր յաճախ այցելել ինձ, խօսել ինձ հետ և շատ անգամ նոյնիսկ կատակներ անել, իսկ ես այս բոլորը տեսնելով աշխատում էի որքան կարելի է բռնած գիրքս հանդէպ տիկին Աշխէնի՝ չփոխել:

Մի օր խօսակցութեան ժամանակ, նա անուղղակի կերպով ակնարկեց, որ ես մի քանի առարկաներից պարապեմ նրա որդու հետ: Թէեւ ես ոչ մի որոշ պատասխան չտւի, սակայն միւս օր այդ նոյն փափազը յայտնեց և Զօրեանը. ես չմերժեցի: Սակայն ես այնքան էլ միամիտ չէի, որ չիմանայի թէ բանն ինչու՞ն է: Այդ մի պատրւակ էր տիկին Զօրեանի կողմից՝ ինձ հետ աւելի տեսակցելու և խօսելու:

— Իմ կարծիքով, — ասում էր տիկին Աշխէնը. — մենք մայրերս շատ խիստ պէտք է լինենք երեխաներին կրթելու և դաստիարակելու մէջ. դրա համար ես շատ եմ փափագում, որ իմ երեխաները վաղ մանկութիւնից կրթւեն, դաստիարակւեն և վարժւեն աշխատանքի, որպէսզի վաղը երբ մեծանան, մարդկութեան անտանելի բեռ չդառնան:

— Ես նոյնպէս համակարծիք եմ ձեզ հետ, — պատասխանում էի ես, նրան նեղ դրութեան մէջ չբռնողներու համար:

Մեր զբաղմունքը լինում էր յաճախ ժամերով. երեխան այնտեղ խաղում էր, իսկ մենք խօսում էինք զանազան խնդիրների մասին:

Մենք յաճախ խօսում էինք ընտանեկան կեանքից. երբ կարող է մի ընտանիք դժբաղդ լինել, իսկ երբ երջանիկ: Նա դժգոհ էր իր կեանքից. պախարակում էր իր մարդու ընթացքը:

— Զեմ կարող տանել, — ասում էր նա. — երբ ամբողջ զիշերները նա կլուբներում քարշ է գալիս: Առաջէք խնդրեմ, դուք եթէ լինէք կնոջ տեղը, ինչպէս պիտի վարւէիք այսպիսի տմարդի վարմունքի դէմ:

— Եթէ ես լինէի ձեր տեղ, երբէք դժգոհութիւն չէի յայտնի. ինչ ուզում է թող անի, բաւական է որ նա ձեզ հաւատում է և սիրում:

— Այստեղ դուք արդէն անարդար էք խօսում, պատասխանում էր նա բաւական վիրաւորական եղանակով: Ի՞նչպէս թէ ինչ ուզում է թող անի, այդ ժամանակ էլ ինչ ընտանիք կարող է լինել: Ես նոյնպէս եթէ այդ կերպ վարւեմ, այդ հօ անարխիա դուսկը գայ:

Զարմանալի է կնոջ հոգեբանութիւնը. նրա շարժու ձևերը, խօսակցութեան տոնը, նրա անհանգիստ դրութիւնը և լափող հայեացքը, ինձ բերում էին այն միակ եզրակացութեան, որ նրա բոլոր ասածները կեղծ են և նա ուզում է որ անարխիա լինի:

Սակայն ես այսպիսի պարագաներում, միշտ պաշտպանում էի նրա մարդու ընթացքը. որպէս զի նրա անբաւականութիւնը աւելի աճի և հէնց այդպէս էլ լինում էր:

Դեռ այժմ էլ յիշում եմ այն զիշերը, այն մոմթ

և աղջամղջային գիշերը, երբ ես կիսաքուն պառկել էի, և սվ գիտէ ինչեր էի մտածում, մէկ էլ կամաց դուռս բացւեց և երևաց մի հրեշտակաման ոգի, ձերմակ հագած, երկար մազերը փուած ուսերին, անձայն անշշուկ մօտեցաւ մահճակալիս և մի վայրկեան կանգնելուց յետոյ, երկար շունչ քաշեց: Այդ ոգին ոչ երկնքից էր իջել և ոչ էլ մի ցնորք էր, այլ տիկին Աշխէն Զօրեանն էր, որին շատ երկար ժամանակից ի վեր սպասում էի, բայց նա չէր գալիս...

Զգիտեմ ինչու այդ վայրկեանին սոսկալի դող անցաւ մարմնովս շնչառութիւնս սկսեց կտրւել, սիրտս արագ-արագ բաբախել: Բայց այդ դրութեանը շուտով վերջ տւեց տիկին Աշխէնը ինձ ձայն տալով: Ես որպէս թէ վախեցած յանկարծ վեր թռայ անկողնիցս և ապուշի նման կանգնեցի սենեակի կենդրոնում:

— Լսիր, ասաց նա, դողդոջ ձայնով, կը ներես որ քեզ նեղութիւն եմ պատճառում, (առաջին անգամ էր նա ինձ հետ եզակի խօսում): Գլուխս սաստիկ ցաւում է, այնպէս որ չկարողացայ քնել. խընդրում եմ գնաս դեղատուն և միգրէնի գեղ բերես, այլապէս ես կը մեռնեմ՝ ի սէր Աստծոյ, ասաց նա և դողալով նստեց մահճակալիս վրայ: Զգիտեմ այդ ժամանակ ինչու Զօրեանը ձեռքերը ծալած, վիզը ճկած, ողորմելի դրութեամբ պատկերացաւ երևակայութեանս մէջ, և մի անհաճոյ զգացողութեան տակ, հարցրի.

— Տիկին Աշխէն, միթէ ձեր ամուսինը տանը չէ:

— Իհարկէ այստեղ չէ. եթէ տանը լինէր, նրան կուղարկէի, — ասաց նա աճապարանքով:

— Բայց ես կարծում եմ շուտով կանցնի. այդ-

պիսի դէպքեր շատ անգամ են պատահել ինձ և երկար չեն տևել, — ասացի ես բոլորովին անտարբերութեամբ և մօտեցայ նրան. ձեռքս դրի ճակատին և զարմացական բացականչութեամբ նստեցի նրա կողքին: Դրանից յետոյ մեղմ թուլութիւն զգացի, որին յաջորդեց սարսուռ. ճիշտ այնպիսի դրութիւն ստեղծւեց ինձ համար, որպիսին էր խնճոյքի ժամանակ:

Կրքերը բռնկեցին իմ մէջ, աղամայից ես զրկեցի նրա իրանը. մենք չէինք խօսում. այդպէս շատ լաւ էր թւում մեզ:

Սկզբում նա ուժեղ կերպով հրեց ինձ մէկդի, բայց մի վայրկեան յետոյ ես հանդիպեցի կանացի մի թոյլ դիմադրութեան և մեղսակից սենեակը նիւհեց մեզ հետ...

Առաւօտեան ես ինձ ճնշւած էի զգում. իմ ներքին ձայնը ինձ տանջում էր և կարծես ականջիս այսպէս էր փսփսում. — «մի բան որ չպէտք էր անէիր՝ արիր. և հէնց դրա համար քո ընթացքը դատապարտելի է»: Սակայն կարծես մի հակառակ ձայն ասում էր. «մինչև այժմ կիսատ ես ապրել, իսկ հիմա արդէն լրացնում ես կեանքի այդ պակասը. ապրիր և երբէք մի տանջւիլ, որովհետև մէկի երջանկութիւնը միւսի դժբաղդութեան մէջն է կայանում»:

Իմ ներքին ձայնի մաքառման հետ մի կերպ կարողացայ հաշտւել: Սակայն ինձ աւելի մտադանջութիւն էր պատճառում այն բանը, թէ ինչպէս պէտք է գնամ նախաճաշելու, ինչպէս անեմ, որ ինքս ինձ չմտանեմ, ախր նոյն սրտով չեմ կարող Զօրեանին ձեռք տալ և բարկել. բոլոր-բոլոր դրութիւնները կեղծ դուրս

կգան և իմ արտայայտութիւնից կը կռահեն եղելութիւնը:

Այս մտածմունքի մէջ էի, երբ աղախինը իմ դուռը ծեծեց և ինձ հրաւիրեց թէյի: Ես առանց տեղիցս վեր կենալու, յայտնեցի որ փոքր ինչ տկար եմ, և ախորժակս բոլորովին փակւած է, այնպէս որ թող իզուր տեղը ինձ չսպասեն:

Աղախնի գնալուց անմիջապէս յետոյ, Զօրեանը եկաւ ինձ մօտ, բարեկեց և նստարանը քաշելով նստեց սնարիս մօտ:

— Ի՞նչ է, տաքութիւն ունէ՞ք, — հարցրեց նա մըտերիմ բարեկամի տոնով:

— Ձէ, առանձին ոչինչ չկայ, միայն թէ մի քիչ յոգնածի պէս եմ և արամադրութիւն չունեմ վեր կենալու, պատասխանեցի ես կեղծ ժպիտով: Քիչ յետոյ կիներ երեխայի ձեռքից բռնած եկաւ սենեակս և կանգնեց մարդու կողքին: Նա այնքան լուրջ և սովորականի պէս բարեկեց, որ ես ուղղակի զարմացայ, կարծես թէ ոչինչ, ոչինչ պատահած չլինէր մեր մէջ:

— Մըսած կը լինի, ասում էր Զօրեանը:

— Ձէ մըսած չի կարող լինել, բայց չափազանց մտաւոր աշխատանքից տկարացել է, ասում էր տիկին Աշխէնը ուղիղ նայելով իմ գէմքին:

Ես երբեմն-երբեմն անքում էի և չէի ուզում խօսել: Նրանք նկատելով այդ հեռացան: Մարդու տնից գնալուց անմիջապէս յետոյ, տիկին Աշխէնը իրան զցեց ինձ մօտ:

Մենք ամաչում էինք իրար նայել, սակայն մի քանի վայրկեան խօսելուց յետոյ, իմ մէջ մի անեղեակայելի համարձակութիւն առաջ եկաւ ու ես

շակւելով սկսեցի նայել նրան՝ ուղիղ աչքերի մէջ: Մի գիշերւայ մէջ նա իմ աչքում այնքան փոխւել էր, այնքան հասարակ և խղճալի էր դարձել, որ նրա մասին կազմած համարումս փոխւեց ծիծաղի:

Նշանակութիւնից ընկել էին նրա սպիտակ կուրծքն ու պարանոցը. նրա ծոծրակի գեղեցիկ մազերը, որ միշտ սանդրում էր զէպի ետևը և ամրացնում էր երկու նոյնանման սանդրերով, էլ անմատչելի չէին երևում ինձ:

Կիներ այն ժամակն է միայն գեղեցիկ և զրաւիչ երևում իր սիրած տղամարդուն, քանի զեռ անձնատուր չէ եղել նրան:

Դրանից յետոյ տիկին Աշխէնը գիշերային այդ խորհրդաւոր պահերին ինձ այցի էր գալիս: Որեւէ կասկածանքի տեղիք չտալու համար, նա առաջւայ նրման ինձ հետ շատ սիրալիւր էր վերաբերւում, ճաշի նստելիս միշտ «ձեզ» և «դուք»-ով էր խօսում: Իսկ Զօրեանի մտքովն անգամ չէր անցնում իր «հաւատարիմ» կնոջ գաւաճանութիւնը: Նրանք նոյն սիրող ամուսիններն էին, նոյն սրտակից ընկերներն ու հարազատները: Տեսնելով այս բոլորը ես ուրախանում էի: Այս զէպքից յետոյ ես ապրեցի նրանց մօտ էլի մի քանի ամիս: Պէտք է ասել, որ ես այժմ ամեն ինչ հասկանում էի և կեանքի բարդ խնդիրներից մէկը լուծւած էր ինձ համար: Առաջւայ նման էլ չէի մնում տանը և խոյս էի տալիս տիկնոջ հետ խօսելու:

Տիկին Աշխէնը խելագարի նման սիրում էր ինձ, բայց նա ամեն ջանք գործ էր դնում իր սէրը թաքցնելու ինձնից. այդ էլ մի միջոց է, որով կանայք կարողանում են երկար պահել իրանց սիրած տղամարդկանց:

Սակայն իմ անտարբերութիւնը պակաս չէր տանջում նրան, և հէնց դրա համար էր, որ նա երկւոր, շատ երկւոր ժամանակ դեռ սիրում էր ինձ:

Ուրախ էին անցնում իմ օրերը, սակայն ինչպէս ամեն մի քաղցրութեան կողքին դառնութիւն կայ և իւրաքանչիւր վարդի մօտ մի փուշ է բնութմ, այնպէս էլ իմ ուրախ օրերին յաջորդում էին տխուր օրերը: Շատ անգամ այդ տան բոլոր առարկաները ինձ խորթ էին թւում, պառտւի դէմքը աւելի անտանելի էր դարձել, իսկ երբ նայում էի Զօրեանի երեխայի վրայ, բարկութիւնս գալիս էր. ինձ նեղ և վիրաւորւած էի զգում մանաւանդ այն ժամանակ, երբ նա ինձ «հօրեղբայր» էր կոչում:

Ես նախագգում էի, որ այս բոլորից յետոյ մի անտանելի և դառն կեանք է սպասում ինձ և այդ դառնութեան միակ պատճառը տիկին Զօրեանը կը լինի: Բաւական է մի փոքրիկ կասկած և ամեն ինչ կը պարզւի, մտածում էի ես, և կը վերջանայ մեզանից մէկն ու մէկի արեամբ և ամբողջ ընտանիքի անկումով: Սակայն այս բանը աւելի շուտ նախագգացել էր տիկին Զօրեանը:

Մի գիշեր, այն յանցաւոր ժամերին, երբ նա ինձ այցի էր գալիս, ես արթուն էի:

Նախ քան գնալը, նա տխուր տոնով ինձ ասաց. «Թէև դժուար է ինձ բաժանման մասին քեզ հետ խօսելը, բայց ինչ արած, երբ կարիքն է ստիպում: Դու անպայման մինչև ամուսնայ վերջը աշխատիր հեռանալ, ի հարկ է նախօրօք մարդուս յայտնելով, և այն պատճառաբանութեամբ, որ ստիպւած ես հեռանալու և ցաւում ես այդ բանի համար»:

Երբ «ինչուն» հարցրի, նա ոչինչ չպատասխա-

նեց, միայն կռացաւ ինձ վրայ և համբուրեց իմ աչքերը ու խոր հառաչելով հեռացաւ:

Կէս օրին յարմար առիթից օգտւելով, նորից հարցրի պատճառը:

«Որոշ ոչինչ չկայ, պատասխանեց նա կարճ և ազգու եղանակով. բայց ինչ որ ասացի անյապաղ կատարիր»:

Ես լսելով տիկնոջ առաջարկը, երկու շաբթւայ ընթացքում հեռացայ նրանցից: Երբ առաջին անգամ գնալուս մասին յայտնեցի Զօրեանին, նա զարմացմամբ հարցրեց.

— Հօ որ և է անախորժութիւն չէ՞ պատահել:

— Ո՛չ, երբէք, ընդհակառակն ես շատ զոհ եմ բաժանում ձեզանից և յոյս ունեմ, որ մեր անկեղծ բարեկամութիւնը կը շարունակենք մինչև մեր կեանքի վերջը, ասացի ես, և ամուր սեղմեցի նրա ձեռքը:

— Ես նոյնպէս հաւատում եմ ձեր անկեղծութեանն և մաքուր բնաւորութեանը, և ցանկանում եմ ձեզ ուժ, որ մինչև խոր ծերութեան օրերը այդպէս ապրէք, ասաց Զօրեանը մի տխուր եղանակով:

...Ու ես անդարձ բաժանեցի նրանցից: Վերջին տեսակցութեան ժամանակ, տիկին Աշխէնը ամենից առաջ իմ հասցէն գրեց և արտասուրը աչերին դալկացաւ կրծքիս ու հեկեկաց... Ես նոյնպէս զգացեցի:

Ես յաճախ նրանից նամակներ էի ստանում և գրեթէ բոլորի բովանդակութիւնն էլ յուսահատութիւն և դժգոհութիւններ էին:

«Ա՛խ սիրելիս, դու չգիտես ինչպէս եմ կարօտել քեզ. գրում էր նա իր նամակներից մէկում. դու չէս երևակայում, որ ամբողջ օրը քո մասին եմ մտածում: Քո գնալուց յետոյ, կարծես թէ մեր

տունը ամայացել է ինձ համար. ապրելը ինձ համար դժուար է, շատ դժուար: Տխուր ընդհանրապես անց եմ կացնում քո սենեակում, միակ մխիթարութիւնս որ կայ՝ քո լուսանկարն է:

«Երբ այբօմս բաց եմ անում, երկար շատ երկար նայում եմ քո վառ/ուռն աչքերին և դառն արտասուում. արտասուքի մէջն էլ մխիթարութիւն կայ: Ու ես մխիթարում եմ». վերջացնում էր նա իր նամակը:

Մի տարի յետոյ էլ ես նրանից նամակներ չէի ստանում:

Ես գրեթէ մոռացել էի նրա մասին, երբեմն-երբեմն միայն յիշում էի նրան: Սակայն մի նամակ, մի գուժկան նամակ, ամեն ինչ պարզեց և ինձ ըստիպեց կրկին վիրապրելու անցեալ կեանքով:

Նամակը իմ այնտեղի ընկերներից էր և ունէր հետեւեալ բովանդակութիւնը.

«Ընկեր, բարեկեցի, համբոյրների և վերջիշումների նամակ չէ, որ գրում եմ քեզ, այլ մի ընտանիքի, մի դժբաղդ ընտանիքի կործանումը, որ տեղի ունեցաւ երէկ, գիշերւայ ժամը երկուսին: Անշուշտ թերթերում կարդացած կը լինես այդ դրամայի մասին, բայց թերթերը շատ աղաւաղած, կիսատ պատեն հազորդում ամեն մի լուր: Ես քեզ կը պատմեմ մանրամասնութիւնը, որովհետեւ քաջ գիտեմ, որ քեզ չափազանց հետաքրքրում է:

«Քո մեկնելուց յետոյ ես ժամանակ առ ժամանակ այցելում էի Զօրեանին, (ոչ տանը, ի հարկէ, խանութում) այդ տնաքանդին միշտ տեսնում էի նստած աթոռի վրայ, թերթը ձեռքին, աչքերը փակած հաւի նման նիրհելիս: Քիչ էր խօսում, և կարծես թէ մի փոփոխութիւն էր առաջ եկել նրա մէջ:

Մի օր, երբ էլի այցելեցի խանութը, մեծ գործակաւարն էր խանութում. զանազան նիւթերի վրայ խօսելուց յետոյ, խօսքը բացւեց Զօրեանի մասին: Նա ասաց, որ տիկին Զօրեանը սիրահարւել է Միհրանի վրայ: Տիկին Զօրեանը առաջ շաբաթը մի անգամ հաղիւ էր գալիս խանութ, բայց վերջերս արտասովոր կերպով խանութումն է լինում:

Ի հարկէ Զօրեանը ինչպէս և մենք որոշ ոչինչ չենք իւճանում, բայց նրանց յարաբերութիւնից, խօսելու առնից և զանազան փոքրիկ պատճառներից մարդս գալիս է այն եզրակացութեան, որ եթէ ոչ այժմ, գոնէ ապագայում մի ինչ որ բան պատրաստւում է նրանց մէջ: Եւ հէնց դրա համար էլ Զօրեանը նախազգուծ է չարիքը, և պէտք է ասել, որ շատ է տանջւում:

— Եթէ այդպէս է թող որևէ պատրւակով գուրս անէ Միհրանին, ասացի ես:

— Ինչպէս կարող է այդ քայլը անել, պատասխանեց գործակաւարը, քանի որ որոշ ոչինչ չէ իմանում. կամ թէ ինչ մեղաւոր է Միհրանը, երբ այդ բոլորը, ինչ որ պատմեցի, տիկինն է իրան թոյլ տալիս անելու:

— Չնայած որ ես Միհրանի հետ ընկած եմ, բայց չեմ կարող ճշմարտութիւնը չը խոստովանել, որ Միհրանը հաւատարիմ, ազնիւ և աշխատասէր գործակաւար է. այսքան տարի իրար հետ ծառայում ենք, բայց ոչ մի ժամանակ չը նկատեցի, որ նա օտար աչքով նայէր տիկնոջ վրայ:

Երբ բանը կնոջից է, տղամարդը ինչ մեղաւոր է:

Ահա սիրելիս այսպէս վերջացաւ իմ խօսակցութիւնը գործակաւարի հետ: Հետևողութիւնը շատ պարզ է, որ Զօրեանը զգուշութեամբ հետապնդած կը լինի

կնոջը: Եւ այդ բանի հետեանքը եղաւ երեկեայ դէպքը:
«Ինչպէս քեզ յայտնի է, նա կլուբներումն է
մեծացել: Դժբաղդ դէպքի երեկոն յայտնում է կը-
նոջը, որ ինքը գիշերը սուսն չէ գալու. բայց մնում
է տանը:

Երբ ամենքը քնում են, քիչ յետոյ կիներ վեր է
կենում, ննջարանում պատրաստութիւններ է տես-
նում և որոշեալ ժամին, սև մուտքից գործակատար
Միհրանին ներս է ընդունում: Ուտում, խմում և
ժամը ուղիղ երկուսին պառկում են քնելու: Զօրեա-
նը ներս է մտնում և ատրճառակի հինգ հարւածով
տեղն ու տեղը սպանում է երկուսին և յետոյ ինք-
նասպանութիւն գործում:

Ինչպէս իմացայ, Զօրեանը ահագին պարտքեր
է թողնում, և եթէ պարտատէրերը խանութը ծա-
խեն, ապա ինչպէս-պիտի ապրեն նրա երկու որբե-
րը և պառաւ մայրը: Ընկերոջս նամակը վերջանում
էր հետեւեալ տողերով. «Մարդու անկումը կնոջով
սկսւել է, և նրանով էլ պիտի վերջանայ»:

Այդ օրւանից այս օր շատ օրեր են անցել: Ես
դեռ այժմ էլ մենակ, անընկեր եմ ապրում: Սակայն
ամեն գիշեր այն ծանօթ ժամերին, յանկարծ զարթ-
նում և մտածում եմ իմ հին-հին օրերի մասին, և
մի թախիծ համակում է իմ սիրտն ու հոգին:

Ես մտածում եմ մի սիրող սրտի, մի կենացի
մասին, բայց երբ երևակայութեանս մէջ պատկերա-
նում է այն ճերմակաւոր սգին, որ միշտ այցելում
էր ինձ գիշերւայ մեռելային լուսութեան մէջ, մտքերս
խառնւում են, դատողութիւնս կանգ է առնում և մի
մահաշունչ սարսուռէ անցնում մարմնովս:

Քանի որ այս բոլորը դեռ թաքմ կը մնան իմ
յիշողութեան մէջ, և քանի որ կանայք այսպէս շա-
րունակեն, զժամը թէ ես ամուսնանամ:



14-25

«ՆՈՐ ՀՈՍԱՆՔ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1 «Կինը» Լևոն Շանթ	20 Է.
№ 2 Շրջափոխներ Ռէն	10 Է.
№ 5 Վարժուհին Միք. Մանուէլեան	5 Է.
№ 6 Կին Ռէն	10 Է.

Գինը 10 ԿՈՊ.

16456

